

# ՄՈՒՐՔԱՆԵՐԱԿ

ԸՆԲԵԹԵԿԱՆ

30 ՓԱՐԱ

ԼԱՆՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ

ՓԱՐԱ 3

ՍՈՒՐՋԱՆԴԱԿԻ իւրաքանչիւր չրջանը 52 օրինակ է : Շրջանին զինն է Պոլսոյ համար 40 դահեկան, կանխիկ : Կիսաշրջանը՝ 26 թերթ 20 դահեկան : Հատը՝ 30 փարսյ : Գաւառացի համար չրջանին զինն է թղթատարի ծախքով 48, կիսաշրջանը 26 դահեկան :



Ծանուցման տողը 2 դահեկան : Անվճար նամակ չ'ընդունւիր : Զի հրատարակուած գրութիւնը ետ չ'են տրաւիր : Նամակ եւ գրութիւնք ուղղել՝ առ Տէրան Գ. Փափուղեան Կ. Պոլիս ՊապըԱ'ի ճատտէսի Քիթուպանէի Ամս մի թիւ 62


ՔՐԻ 4 Գ. ՏԱՐԾ

1888

ՇԱԲԱԹ 16 ՅՈՒՆԻՍ

Գոհութեամբ կը ծանուցանեմք թէ, վեհ. Սուլթանը գնահատելով հայազգի համբաւաւոր արուեստագէտ Մեծ. Յովհաննէս Էֆէնտի Միւհէնտիսեանի Թուրքերէն տպագրական տառերը ծաղկեցնելու համար 50 տարիներէ ի վեր սննեցած անխնջ ծառայութիւնները, բարեհաճեցաւ այս անգամ ալ Զորքորդ կարգի Մէճիտիյէ պատուանշան եւ արուեստագիտական Միտալ մը շնորհել նմա :

Թուրք մամուլը Կայսերական այս շնորհը ծանուցանելով հանդերձ, մեծ դովերտիւք կը խօսի Միւհէնտիսեան Էֆէնտի մինչև ցարդ երկրին մատուցած գնահատելի ծառայութեանցը վրայ եւ մատնանիշ կրնէ զանաւոր արդէն ծանօթ էր իրեն :



Երկայնատիւնակ թերթը վերջապէս բարեհաճեցաւ Քաղ. Ժողովոյ պատրաստած հնգանուն ցանկն հրատարակել, ազգային եւ օտարազգի թերթերէ չա՛տ ետքը, յարելով թէ սոյն ցանկը պատրաստուած էր Քաղ. Ժողովոյ նախորդ նստին մէջ սակայն վերջնական հանգամանք մ'ստացած չի նկելով, կանխահաս նկատեր է այս մասին տրուած որոշումը հրատարակել :

Մենք այս տողերէն բան մը չի հասկցանք, քանի որ ցանկը նոյն է միւս լրագրաց հրատարակած ցանկին հետ, սա միայն տարբերութեամբ որ այդ թերթին տնօրէն ժողովը իւր փափաքածին պէս տեղափոխեր է անուանց շարքն, հետեւաբար, ըստ մեզ անտեղի է նոյն առարկութիւնքն : Այդ թերթին ճիշդ խոստովանութիւն մ'ըրած կը լինէր եթէ ըսէր թէ, այդ ցանկն իւր ուղածին պէս պատրաստուած չլինելուն համար էր որ չէր հրաւտարակած, վասն զի այդ թերթին սովորութիւն ունի պաշտօնական հանգամանք չստացած որոշումներն իսկ օր առաջ հրատարակելու :

Թերթի մը պարտքն է ազգային լուրերն օրն օրին հրատարակել առանց խեղաթիւրելու, եւ եթէ զիտողութիւն մը ունի անոր կցել, ոչ թէ ուղածն հրատարակել եւ չուղածն լռելեայն անցնիլ կամ խեղաթիւրել :

ՍՈՒՐՋԱՆԴԱԿԻ այս իրաւացի դիտողութիւնն ընելէ ետքը, պարտք պիտի համարի յետ այսօրիկ աստղանիշով հրատարակել այն ազգային լուրերն, զորս լայնածաւալ թերթն լռելեայն կանցնի, եթէ իւր շահուց եւ խորհրդոց հակառակ դանէ :

Ահաւասիկ անոնցմէ մէկ նորը :

\* Կրօնական ժողովն դիտողագիր մը զրկէր է առ Արթ. Եղիշէ Ծ. Վարդապետ Այվազեան, ի մասին այն երկայնապատում՝ յօդուածին, որ հրատարակուեցաւ Արեւելի մէջ :

ՍՈՒՐ. — Դիտողագիր մ'ալ այդ յօդուածն հիւրնկալող թերթին զրկուելու էր, որպէս զի յետ այսօրիկ զգուշանայ դայթակիւթիւն պատճառող այդ տեսակ յօդուածներ հրատարակելէ :



## ՀԱՆՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Երեքշաբթի օրը երբ Պահճէ դաբուէն կ'անցնէինք, ձեռքն երկայն թուղթ մը բռնած անձ մը մեզ մօտեցաւ և առաջարկեց որ ստորագրենք: Հարցունք թէ ի՞նչ բան պիտի ստորագրէինք, պատասխանեց թէ Խորէն Նար-Պէյ Սրբազանը Պատրիարք ընտրելու համար: Ըսելով թէ այդ գործողութիւնն Երեսփոխանական ժողովոյ կը վերաբերէր, չմոռցանք իսկոյն ընդօրինակելու այն հանրադիրն, որոյ ներքեւ կարգ մը ստորագրութիւններ կային: Ահաւասիկ օրինակն.

« Եկատելով որ Գեր. Խորէն Նար-Պէյ Արքեպիսկոպոսն Պատրիարքական ընտրելեաց մէջ արժանաւորագոյնն է, ուստի ստորագրեալքս կը փափաքիմք Նորին Սրբազնութիւնն տեսնել բազմեալ ի դահ Պատրիարքութեան Հայոց: »

ՍՈՒՐ. — Ո՞վ կըսէ թէ Խորէն Սրբազան արժանաւորագոյն չէ, ո՞վ կրնայ ըսել նաեւ թէ Ն. Սրբազնութիւնն է միակ արժանաւորագոյնն: Եթէ քաղ. ժողովոյ ցանկէն դուրս ձգուելէն ոմանք բարեմիտք հետեցուցած են թէ Նար-Պէյ Սրբազան անարժան դատուած է, կը սխալին. Խորէն Սրբազանի հետ շատ մը եպիսկոպոսներ ալ դուրս ձգուած են, քանի որ ցանկը ըստ օրինի հինգ անուն միայն պիտի պարունակէր, միթէ դուրս ձգուած միւս եպիսկոպոսներն ալ -բողոքելու իրաւունք չէ՞ն ունենար, եթէ ժողովրդական այսպիսի անտեղի ցոյցերով այս կամ այն եպիսկոպոսին ի նպաստ ժողովրդական հոսանք մը դոյալներու վտրձեր լինին ապագայ շահուց հետամուտ անձանց կողմէ: Մնաց որ, քաղ. ժողովն, իբրեւ տեղեակ ազգային կենսական շահուց, ազատ չէ՞ իւր քուէն տալու որո՞ւ որ ուզէ, ինչպէս որ Երեսփոխանութիւնն ազատ է այդ ցանկէն դուրս քուէ տալու: Ուստի ըստ մեզ բոլորովին անտեղի է այսպիսի ժողովրդական ցոյցեր պատրաստելու ձեռնարկ մը, ինչպէս որ ասոր ձախորդ փորձը տեսնուեցաւ նախորդ Պատրիարքի ընտրութեան օրով:

Ի Դիմաց Աղգին, Երեսփոխանական ժողովն է որ պիտի կատարէ ընտրութիւնն: Ազատ քուէով ընտրեալ Երեսփոխանութիւն մը միթէ իրաւունք չունի՞ ազատ ընտրութիւն կատարելու գերծ ժողովրդային այսպիսի ցոյցերէ որք շատ անգամվընասակար եղած են ազգին:

Այս տեսակ հանրագրութիւնները ուրիշ բան չեն նշանակեր եթէ ոչ Երեսփոխանութեան վրայ

ճնշում բանեցնել մանաւանդ նոր ոյժերով կազմակերպեալ Երեսփ. ժողովոյ մը՝ զոր մեր վստահութեան քուէովը դեռ երէկ ընտրեցինք իսկ այսօր կ'ելլենք հանրադիրներ մատուցանելով սեղ-զակի անվստահութեան նշան կուտանք: Ինչ տար-օրինակ արամաբանութիւն:

Աղգ. Ժողովն Յուլիս 22ին պիտի գումարի նորընտիր Երեսփոխանները վաւերացնելէ ետքը, Պատրիարքական ընտրութիւն կատարելու համար:

— Երեքշաբթի օրը Իւսկիւտարի Ս. Խաչ եկեղեցւոյն մէջ Մեծ. Խեթէոս էֆ. Պէրպէրեանի նորածին որդւոյն մկրտութեան հանդէսը կատարուեցաւ ի ներկայութեան Ամեն. Տ. Մեղիսեդեկ Սրբազանի և Գեր. Յակոբոս Վ. Շահպաղեանի. Դրոշմի խորհուրդը Տ. Մեղիսեդեկ Սրբազան կատարեց, և երախային անունը Օննիկ դրուեցաւ:

— Մինաս Էֆէնտի Զերազ անցեալ Շարաթ օր Տրապզոնի ճամբով մեկնեցաւ մայրաքաղաքէս: Կրսն թէ վարդապետ ձեռնադրուելու և Դէորդեան ձեմարանին մէջ կարեւոր պաշտօն մը ստանձնելու համար կերթայ ի Ս. Էջմիածին:

Մեծ. Միրախորեան Էֆէնտիի հետեւեալ նամակն շնորհակալութեամբ կը հրատարակենք.

... Տնօրէն-Խմբագիր ՍՈՒՐՃԱՆԴԱԿ Շաբաթակերթի

Աղնիւ բարեկամ,

Հուսկ ուրիմ վստահօրէն վերստին կը թեւակոխեմ ի հրապարակ, ուր այս անգամ «ՍՈՒՐՃԱՆԴԱԿ» վերադառնալիս անքեւ զքո նախկին թերթին ի հանդէս կ'ածես. այո՛, գործիդ մօտէն վերահասու եղողներն քով կ'զգան քու անհատական զոհողութիւնն, որով յաջողած ես քոյ ովսանն աւելի ընդարձակել և կանոնաւորել հրատարակութեանդ, կը յուսամ թէ օգտակար ձեռնարկութեանդ ապագային վերայ չես թերհաւատար և ճշգրտիւ կը հաւատաս անխռնջ աշխատութեան և յարատեւութեան յաղթանակին:

Ես այնպէս համոզուած եմ եւ կը հաւատամ թէ՛ ամեն անոնք, որ զբոլի թղթով և դրով ծառայութիւն կը մատուցանեն Աղգին եւ միանդամայն անոր տիրող կառավարութեան, արժանի են քաջակրօնութեան եւ յարգանաց, եւ այս նոյն իսկ մարդկութեան աստակաւոր:

Ուստի՛ աղնիւ բարեկամ, բնաւ երբէք մի՛ վճատիր եւ մանաւանդ միթէ արուէ այնու թէ Հայ Աղգն միմիայն ապրախտներէ չբաղկանար որպէս կը կարծեն յուսեալք ոմանք:

Մնամ յաջողութեանդ ցանկացող

1888 Յուլիս 14

Մ. Կ. ՄԻՐԱՒՈՐԵԱՆ

Կ. Պոլիս



# ԼՅՅԱՔՐԵՐԱԿԱՆ

ԻՐԱԿԱՆ

ՆՈՐ ԴԵՊՔ ՄԸ

## Ի ՊԱՐԱՀԱՆԴԵՍ

188\* փետրվար ամսոյ Հինգշաբթի գիշեր մը, Բե-  
րայի Նոր Թատրոնն արտաքուստ եւ ի ներքուստ շքեղա-  
պէս զարդարեալ էր: Մեծ պարահանդէս մը պիտի տրուէր:  
Երկու սեւէ դիմակաւոր եւ անդիմակ անհամբեր բաղ-  
մով իւրն մը որոշեալ ժամէն մէկ ժամ առաջ իրարու նա-  
խանձողներու պէս զիրար հրձակելով՝ թատերասրահը եւ  
օթեակները կը լեցուէին:

Պարակից (փաճա) չունեցող երիտասարդք սրահին պա-  
տերուն տակ սպասող անտէր դիմակաւորուհեաց կը դի-  
մէին իրենց թեւերն ներկայելով ի պար: Ոմանք կը յա-  
ջողէին եւ ոմանք կը մերժուէին, զի պարահանդիսական օ-  
րինօք լուսցարար դիմակաւորուհի մ'իսկ ազատ է խը-  
րոխտարար մերժել առաջին կարգի պատուաւոր ընկերու-  
թեան պատկանող երիտասարդին թեւը՝ եթէ սա ըստ իւր  
քմայ վայելուէ դէմք չունենայ, եւ երիտասարդն ալ այս  
մերժման վրայ առանց ցաւ դգալու, բնդհակառակն նեւ-  
րուն խնդրելով կը հեռանայ անոր քովէն եւ կ'երթայ ու-  
րիշ մը փնտռել:

— Յաջողակ երիտասարդ մ'ըլլալուդ վրայ միշտ կը  
պարծիս, ըսաւ անդիմակ պարոն մը իւր ընկերին, որուն  
հետ թատերաբեմն ելնելու փոքր սանդուղին առջեւ կանդ-  
նած՝ սրահը եւ օթեակները աչքէ կանցնէին. ահա նա, ա-  
պիտի կարենա՞ս թիւ 20 օթեակին մէջ առանձինն նստող  
դիմակաւոր ս: Նրբակալմ կնոջ ներկայանալ եւ յաջողիլ  
իրեն հետ վաղ մը դառնալու:

— Ինչո՞ւ չէ, պատասխանեց քանամեայ խորխոռ եւ-  
րիտասարդը, անհարկ մը ուղղելով դէպի այն օթեակը, ուր  
խիստ զարդարուն փոքր մանկամարդուհի մը օթեակէն  
զուրս կախուած՝ կարծես այս երկու պարոնները կը դի-  
տէր, ինչո՞ւ չէ, քանի որ ամբողջ հազար է, անշուշտ պի-  
տի պարէ. հետեւաբար մեղք մը գործած չպիտի ըլլամ  
զայն ի պար հրաւիրելով:

Զայս ըսելէ ետքը կրակ ու բոց երիտասարդը առի-  
թը ձեռքէ չի վախցնելով՝ զլսովը բարեկեց կինը, որ չը-  
նորհալի կերպով նայնպէս զլսովը պատասխանեց:

Կ'երեւի թէ պարահանդիսական օրինօք բաւական էր  
այս բարեւի փոխանակութիւնը երիտասարդին համարձա-  
կութիւն տալու, որ բազմութիւնը ձեղքելով սլացաւ, զը-  
նայ օթեակին դրան զարկաւ:

Դիմակաւորուհին, որ երիտասարդին ճամբայ իյնա-  
լը տեսնելով՝ նորա ընկերոջը իւր շնորհակալութիւնը յայտ-  
նող շարժում մը ունենալէն ետքը ներս քաշուեալ էր, ա-  
ռանց «Մտէ՛ք», ըսելու՝ նիւր քաշեց եւ գուռը ինք բա-  
ցաւ:

Նոյն միջոցին վաղը սկսուած էր:

— Ներեցէ՛ք, աղնիւ օրիորդ, ըսաւ երիտասարդը  
չունչը կտրած, արդեօք այս գիշեր ի միտսին նպարելու  
համար մեր թեւն ընդունելու պատիւը պիտի շնորհէ՞ք, եւ

թեւը ներկայելով յարեց. յաւիտեան երախտապարտ պի-  
տի լինիմ ձեզ նապելիդ գեղաշնորհ, եթէ չի մերժուի:

Դիմակաւորուհին ի նշան հաճութեան մնզմիկ մի զը-  
լուիւր շարժեց:

— Ուրեմն աճապարե՛նք, դոչեց երիտասարդն, ուրա-  
խութենէն ստքը գեանէն կտրած, աճապարե՛նք, զի վաղ-  
ցը լմննալու վրայ է:

— (Վաղց չգիտեմ,) պատասխանեց դիմակաւորուհին  
համբի պէս նշանացի կերպով:

— Լաւ. բայց վաղցէն ետքը բօլքա պիտի խաղանք,  
պիտի ընկերանա՞ք մեզի:

— (Ե՛հ, սանկ . . . այո՛.)

— Շնորհակալ եմ. եւ եթէ կը հաճի՞ք՝ թողունք այս  
տաք օթեակը ու Պիւֆէն երթանք, ուր կրնաք քիչ մը  
հանգիստ տունուլ եւ զովանալ, մինչեւ որ Բօլքան սկսի:

— (Դուք գիտէք.)

Անհարկ է նկարագրել երիտասարդին զգացած ուրա-  
խութիւնը, որ յաղթանակ տանողի մը պէս դիմակաւոր-  
ուհին թեւն առաւ եւ ուղղակի տարաւ ի Պիւֆէ, ուր մշտ-  
նողն անպատճառ ողկից ըմպելեաց աւելի կրակոտ գինէն  
քան թէ համէն խաշուելով գոնէ էօֆ մը կը հառաչէ,  
վասն զի մարմնոց նման քսակներն ալ այդ Պիւֆէին մէջ  
Բօլքա, Մազուրքա, Քատրիլ եւ այլն խաղալով՝ կը հոգնին,  
կը քրտնին եւ էօֆ բիւֆ կը պոռան:

Մեր երիտասարդը հազիւ թէ չի մը Ֆին տը Շամ-  
բանեայ բերել տուած էր, ահա իւր ընկերը տեսաւ որ  
իրենին պէս դիմակաւորուհի մը թեւն առած՝ Պիւֆէն կը  
մտնէր:

— Ի՞նչ ըրիր միւսիւ Վահրամ, յաջողեցա՞ր, հարցուց  
հետաքրքրութեամբ:

— Ահա կը տեսնես:

— Եյ պատ՛վօ, արդարեւ ճարպիկ ես եղիր:

— Կաղաչեմ, սիրելի բարեկամս, ըսաւ երիտասար-  
դը ընկերոջը մօտենալով, չըլլայ որ ֆայցօ խօսք մը բեր-  
նէդ փախցնես, վասն զի տոմաս ողորական ընտանիքէ  
մը կ'երեւայ:

— Անոյ եղբր, այդչափ կոշտ մարդ չեմ. . . դոնէ  
ով ըլլալը հասկցա՞ր:

— Ոչ տակաւին. մինչեւ ցարդ հարցումներուս զըլ-  
լով ու ձեռքով կը պատասխանէ, վստահամ դէմքն ալ չի  
պիտի ցուցնէ:

— Անոգ եղբր, քանի մը դաւաթ Շամբանեայ խըմի-  
լուն պէս՝ լեզուն ալ կը բացուի դէմքն ալ. մի՛ղք որ  
այս օրէնքներէն անտեղեակ կը ձեւանաս, եւ բան գիտեմ  
ըսելով կը պարծիս:

Զայս ըսելէ ետքը ընկերը հեռացաւ:

Քառորդէ մը փրջը Բօլքային նշանը տրուելով՝ Պիւ-  
ֆէն հաւաքեալ բազմութիւնը կրակէ՝ փախչողներու պէս  
զիրար հրմշակելով՝ պարասրահ լեցուցան եւ սկսան կա-  
քաւել: Քսան վայրկեանէն դադարի առնել էր, Պիւֆէն ըստ  
առաջնոյն խառնիճաղանձ բազմութեամբ պիտի լեցուէր,  
Միւսիւ Վահրամ իւր ընկերուհեոյն հետ առանց սպասելու  
Բօլքային վերջաւորութեան, Պիւֆէն եկեր բազմիւր էր, ուր  
դարձեալ իւր բարեկամին հանդիպեցաւ:

— Ե՛հ, ի՞նչ ըրիր նայինք:

— Ոչինչ. մինչեւ ցարդ չի մը Շամբանեայ խմե-



ցինք, բայց հակառակ իմ ամեն ազաւանացս կոռքի պէս նստիր է :

— Քիթէդ բոնող տեսակէն չըլլայ, ետքը կը խաչաւիտ, բայց չեմ յուսար, այն կարգին վերաբերողներուն դործածած ձեւերը չունի կարծեմ :

— Ինչ կըսես եղբայր, ազնուական բան է, պարեւում միջոցին ձեռքն անգամ չի թողուց որ ձեռքին միջ առնեմ, հազիւ կը թողուր բթամատին ծայրէն բռնել, այս աստիճաննուրբ եւ է՛միքէթ բան մ'է : ասկէց դատ, շատ չի պարկր : երկու անգամ դատնալէն ետքը հանգարտ նստիլ կուզէ :

— Աւերման Գօնետը բերել տուր, որ շուա մը լիզուեն ալ կը դարձնէ խելքն ալ :

— Աղէկ ըսիք, ուրեմն դուք հեռացէք :

— Յաջողութիւն մաղթելով՝ տան կը հեռանանք :

— Որիորդ սիրտսուն, Գօնետքէ կ'սխտրծի՞ք :

— (Ո՛չ.)

— Ուրեմն քանի մը հատ ոտորէ բերել տանք որ Շամբանեան շարունակենք :

— (Գուք գիտէք.)

— Կառսօն, մեզի տուղինա մը ոտորէ բեր :

— (Կէս տուղինան բաւական է.)

— Ա՛ պահ, եւ արդէն ընկուզի մեծութեամբ բաներ :

— (Թող ագպէս ըլլայ.)

— Ինչպէս գտաք ոտորէն :

— (Շատ աղւոր.)

— Տուգինա մ'ալ թող բերէ :

— (Գուք գիտէք)

— Ձեզի բան մը ըսե՛մ : չի՞ մը Շամբանիա եւս բերել պիտի տամ :

— [Ալ չուզեր.]

— Տէր ողորթա, թող բերեն :

Եւ անմիջապէս երկրորդ չի՛ը բերուեցաւ :

Շարունակելի



ՌԵՍՑՈՎ, ԶԻՅՍՖԵԹ ՄԸ

Ի ՎԵՂԻ ԼՅԷՆՏԻ

Շար. եւ վերջ. Տե՛ս թիւ 1,2

Մինչդեռ խամուրքիսը թապաքեար Ղաղարին յորդորանօքը խորոված գառնուկին գլուխն անցած փորերնին պտտուականապէս կը կշտացընէին, մերթ ընդ մերթ զիրար քաջալերելով թէ՛ « կերէ՛ք ակապրտանք, կերէ՛ք, պէօրէ բիսօ տի տանք. պօշերնիս կաթնավեր տէգկեհատարին ձեռքըն է, ուտինք ալ նը տի տանք՝ չուտինք ալ նը, » ասդին Սհարան ազայն հեռեւեալը կ'երգէր, որուն րե՛ կը բռնէին Պետրոս եւ Փիլիկ ակապարք :

Մօռ մէնէմէ, կիւլ ֆիտանա պէնդէրսին

Գալըն կէօղըն քէմանինի արդէրսին :

Էօզ ճանըմըն պախճէսընտէ կէզէրսին,

Մընի մընի կէօղլէրինի սիւզէրսին :

— Վուլ, առ ի՞նչ աղւոր պաներ կիտես կոր եղեր կնկահար աղա, հիչ վրայէդ չես ցոյցներ ամա. . .

— Էֆէնտըմ, խանէ եղզըդ իսէ տը՝ օճադ եէրինտէ տիւր :

— Հիմակու զանցային թախըմ մը ճահլիներուն վրայ իլիսօն կը դամես կոր :

— Շիտակ է, հիմակու ճահլիները իրար դաւու ըլլան իսէ՛ շարգիներուն շատ իթիպար չին աւներ տը՝ աչկով քինթով կու խօրաթին, պէկ խօղի իշմար կու վերցնին վէ ճահճիթիճիճի կանին. լա թէշպիհ, մեզի պէս օանկս նստած պայլական ճումպուշ մի կընե՛ն մի ես՝ պինտ առաջ, օանկս մեզի պէս դեանին վրայ պօղտալ չին կընար նստիլ, դէօրէ կու վախնան ուր՝ չաթալ-չէքէճի պէս նեղ բանթալօնին չըսուելու տեղէն կու պատուին : քէզալիք տի տիւ հանումներն ալ չին կընար նըստիլ, անսնց ալ էաւենուն կախած պօխճանին էնկէլ կուլի :

— Ո՛ւլ, բէք շիտակ է ըսածդ : անսնք ալ կը խմեն ամա՛ անխտար շատ չեն փախցներ, անսնք ալ քատրիլով բօլքայով տահա էվէլ քէֆ կիմանան :

— Տիւտիւ հանըմ, մարդ տի խմէ իսէ՛ թամ խմելու է, անանկ էրկու խտտէֆ տունկէլէն սըզրա պէխերը բերանն առած սիւզկէճ տի ընէ իսէ՛ հէշ թող չի խմէ : Հէլէ ադ բօլքային ու սաթային օյինը չիկա՛մի, սո ու՛ր է խօրօղի պէս իրար փաթտուած կու ցատկուտին, ի՛շ քէյֆ կիմանան՝ չլիտիմ :

— Էյ օղլըլաս կնկահար աղաքի՛ տանկ բիւթիւն սիրտերնուս կը խօրաթես կոր :

— Անանկ է նը՝ սա խտտէֆները լիցուցէք տը՝ կենդանի ալօթքը բարեխօս օղորմած ֆօզի Տիւ տիւկէնց խամպուռ Աստիւր վարժպետին աշուխաւամ շինած շարգին մաիկ արէք :

Մէշկուռըդ բարակ, էյ ճանըմ մայմուռ,  
Ձեա գտնիր ինծի պէս անըման գամպուռ :  
Մայմուռն ու գամպուռը իրար ուր սիրեն՝  
Ֆէլէկին պիլէ խօշը կու բերեն :

— Ձայնդ անխպա՛ռ, տէգկեհատար պէկ :

— Պէյրօ՛ս, իքինճի պէյիթին ալ քույն է :

— Գիւլուս վրայ էֆէնտըմ :

Կօլըններու լեռներէն օնցա եկայես,  
Ինչալլահ կուլի ուր՝ ֆէօն կու տանիմ քեզ :

— Ինչալլահ Պէյրօս, ինչալլահ Մայմու՛ռ հանըմ, ինչալլահ մին ալ դո՛ւն ըսէ :

Պաղուկ պաղուկ ջրեր անմտն քարեր  
Երկուքն ալ ան կիւտին ու չունին տերեր :

— Քուրուկ, ասոնք աչըն Ղարիպի պէս խարչըլըլը խաղի պաշայեցին, խօսքը մէջերնիս՝ անօթի ալ կը մարինք կոր :

— Տիւտիւ հանում, թօխա մի չի՞ տի անինք :

— Վուլ շնորհակալ ենք արթըն գուզում կըն-



կահար աղա, հէմ սահաթը ութը անցաւ, դուք գիտէք ամա՞նքիչ մը բան ուսնենքնէ կըլլա՞յ.

— Բարով կուլլի էֆէնարմ. ծօ՛ մէնչիւկներ, սա խուզին բերէք.

Անմիջապէս խառնուրեքար մը գառնուկէն մնալցորդ յիշ մը միտք բերաւ սեղանին մէջ տեղը դրաւ.

— Ծօ, ադ ի՞նչ է, պստաց Ահարոն աղայն, սա խուզին խո՛ւռան է կերեր ի՞նչ է եղեր.

— Պէլի աղա, իբր պօճախը խուռտերը կերան.

— Էյ շինլիբը ու շիլինկունքը ո՛ւր գացին.

— Պօղազ իշին.

— Աղջիկ շիլինկունքը ըսածը ի՞նչ է.

— Ճիկէրին ու պօճախին հըմար կըսիմ, տիւտիւ հանրմ.

— Պէլի ֆուռունճիին աչկերը ճամբան մէտէն ուղեց կերաւ.

— Նէ՞ մինասիպէթ էֆէնարմ, ծօ Թաթոս, սա խուզին ո՞վ կերաւ.

— Աղա, փորերնիս անօթի է ըսին, նստան կերան ու ելան գացին.

— Եա՛, անանկ է նը աշվընին լուս եղիցի, ես հըմայեկս կերթամանոնց հախէն տի դամ.

Ձայս ըսելէ ետքը Ահարոն աղայն կրկնօրը առաւ և բարկութեամբ ճամբայ ելաւ, բայց սրովհետեւ քայլելու կարողութիւն չունէր՝ ինկաւ.

— Ինձի նայէ Փիլիպոս աղա, ըսաւ զօրանչը, սա մարդը տէյ Պալի բաշա չպիտի կրնայ. քալել, ճամբան պիտի մնայ, մէկէնիւր գացէք մուհաճիր առապասի մը բերէք մէջը դրէք, տա արխատաշներուդ ալ ըսէ, ուփախը թէֆէխը ժողունն առնեն տանին, մենք ալ տեղերնիս իյնանք.

Փիլիկ ակապորը զօրանչին իրաւունք տուաւ և մուհաճիրի կառքով մը Ահարոն աղայն ճամբու դրուեցաւ, և որ մերթ ընդ մերթ կառքին մէջէն կը պստար.

— Վա՛յ կատու կաթնավերներ, պապա իկիտութին հը՞. քընթերնուդ բերնեղնուդ տի բերիմ.

Հետևեալ առաւօտ Ահարոն աղայն գինովութեանէն սթափեալ, զիյաֆէթին համար եղած ծախքը խուզին ուսողներուն հաշույն անցուց, թէ և անոնք բողբոջին թէ « իրենք խուզին կերան նէ՛ ինքն ալ Ահարոն աղայն հէլման ու օղին հասցուցեր էր, ուստի հաշիւը պէտք էր բիսօյով տեսնել, բայց Ահարոն աղայն ի պատասխանի. — Ոսօր ալ խալթ էք ըրիր, վաղն ալ, ես չըլլալի իտէ՛ դուք զիյաֆէթն ու խուզին ո՛ւր տի տեսնտեք, մայէթինտէ ճումպուշս հարամ արիք՝ վէ անօթի փորով իս ֆէօս բերիք, պինաէն ալէյհ, հիսապ քիթապ խամդթաշ՝ եէքիւնը ձերն է պաշապաշ. խապուլ չընողը թող եաթախը չալիէ փուէն դիւրս իյնայ եափաշ եափաշ.

Թապալեքարք մտածելով որ Ահարոն աղայն հիւրերուն քով սղտիկ մնալուն համար այս աստիճան զայրացած էր, և որոյ յիշատակը երբէք մտքէն չպիտի ելներ, ձայններնին կարեցին և՛ սկսան աշխատիլ.

## ՏՕՒԹ . Ա . ԹԵՐԶԵԱՆ

ՄԱՍՆԱԽՈՐ ԲԺԻՇԿ ԿՈՒՐԾՔԻ ՀԻԱՆԴՈՒԹԵԱՆՑ

Ամեն առաւօտ Բերա իւր բնակարանը Թադսիմ Ֆէրէաիէ փողոց թիւ 3. նստելէս օրէն վերջը Պոլիս Օղճըլար պաշի Տէօփիլթեան դեղարանը թիւ 33. անկարող հիւանդներն պիտի ընդունուին Ուրբաթ օրերն նոյն դեղարանը, իսկ երկքշաբթի առաւօտ Բերա իւր բնակարանը.

## ԾԱՂՐԱՔԱՂ

Երէկ իրիկուն տան մը մէջ

Գուղում Արթուրի աղա, քեզի բան մը պիտի հարցնեմ, ինձի բէք մէռաք եղաւ.

— Հարցուր նայինք.

— Սա ո՛ւր է էրկու իրեք շաբաթ է թէվաթուռ մը կար ասորուան համար քի՛ հրեայ մը տէրէճէսիղ տաք պիտի ըլլայ եղեր ըսեր է տէ՛ ամեն մարդ սէրին մախսէնները մաղաղաները պիտի քաշուին եղեր, պարէ մարդուն խօսքը էկաւ էլաւ.

— Ելաւ եա՛.

— Էյ մենք տունին մէջ բան մը չիմացանք, ադ խտար տէրէճէսիղ տաքը ո՛ւր ըրաւ.

— Բազմիքներուն ներսերը.

\* \*

Անցեալ իրիկուն տան մը մէջ այր և կին կուռի մը բռնուելով՝ դրացիք վրայ կը հասնին խաղաղցնելու համար. խաղաղարարներէն մին կընօղ դառնալով կըսէ.

— Ան էրիկ մարդ է, պէլքի չարչին մէկուն նեղացած էր, դուն իրեն հետ անոյշ վարուելու ես, անոյշ լեզուն օճը ծակէն կը հանէ կըսեն.

— Աղէկ կըսես հաճի ակապար ամա՛, սա մարդուն հետնա՞նք անուշ խօրակելու է քի, տարի մըն է ինձի լօխմա մը անուշ կերցուցած չունի.

\* \*

Դասարանի մը մէջ ֆրանսերէն ուսուցիչը իր աշակերտներէն միոյն ըսաւ.

— Ծո՛յլ դու, ամեն ատեն անուշադրութեամբ իզական բառերուն տրական յօդ կը գնես.

— Ի՞նչ ընեմ, միւսիւ գոչեց ուսանողը ինքզինքը արգարացնելու զոռողութեամբ, բառերը ոչ պընըն ունին ոչ ալ մօրուք որ՝ արու կամ էդ ըլլալին հասկնամ.

\* \*

Ճանրմ մամիկ, երկինքը քանի՞ աստղ կայ.

— Եափրում, չիտեմ ամա՛ մէկ հարուր հարուր հաղար հեղ հաղար հատ մը ըլլալու է.

— Էյ հապա մեր վերի կարգի միւսիւն ըսաւ.



քի 8000 հատ անճախ կը համբուրի .

— Հը՛հ, մեղայ, սանքի երկինք էլէր մատովը համբեր եկեր է տէ կիտէ կոր , իմ ըսածիս չի հաւտար տէ՝ անոնց ըսածին կը հաւտայ :

\* \*

Գիւղի մը բնակիչք տմառ տտեն չկրնալով պահք բռնել, տեղւոյն առաջնորդին կ'երթան խնդրել որ՝ ներէ իրենց պահք չի բռնելուն, ըստ որում լուբիան քամի կուտայ .

Առաջնորդը կը պատասխանէ .

— Պօշ լախըրար , մանաւանդ թէ կ'արձկէ :

\* \*

Միւսիւ Վէնսան, աիւն մատամբնըր Գարլօ գոլթուղունա ալմը Սանթամարիա քիլիսինէ կիտէյօր ըստ, սէնին մալիւմաթըն վա՛ր մը .

— Քրիստոնեաճա շէյ օլտուգտան սօնրա՝ մալիւմաթըմ օլմուշ օլմամըշ, պէյլա եօղ :

\* \*

Օ՛, պօնժուր միւսիւ ժագ .

— Պօնժուր մօնամիլ .

— Նէ՛րէյէ պէօյլէ .

— Պէօյլաքտէրէյէ .

— Աննատըմ, մատմաղէլ Ֆիլոմէնէ վիղիթա վէրէճէքսին .

— Նիյէթիմ՝ էվլէլճէ պիղիմ պարպաւա կիթմէք, էկէր վագթիմ միւսաաաէ խտէրոնէ՝ օնուն էօնինն տէն տէ կէչմէք իսթէրիմ :

— Ա՛յ , պու գատար արանըդ սօումոն՝ շ մու եա .

— Սէպէպսիղ տէյիլ տիր .

— պու տէրէճէ պիր սէպէպ Նէ՛ օլապիլիր .

— Հի՛ հազ իթմէտիղիմ պիր հալ .

— Աման միւսիւ ժագ, սէօյլէ , Նէ՛ իմիշ պագալըմ .

— Աշուրի տէրէճէ պօյա վէ բուտրա գուլլան մասը :

— Ա՛, ժը գօմբանտ, տօղրուսու պէնտէնիլտէ պու թէրթիպտէն հաղ իթմէմ, ֆագաթ ընկի խաս մատմաղէլ տէ չօգ կէօրէմէյօրըմ :

\* \*

Քիլիսէնին պիրինտէ, պիր տաղաւար կիւնիւ պիր գաշ եպիսկոպոս վէ վարդապետէր հաղըր պուլունմագտա իտէլէր, իքի մայրապետ պիր պիլիլէ սէօյլէյէրէք :

— Ա՛խ , Նէ՛ տուա սէօյլէյէճէիմի Նէ՛ տիլէք էտէճէյիմի պիւսպիւթ իւն շաշրարմ, հէ՛յղըզարտաշ, պու Նէ՛ գատար վարդապետ , պու Նէ՛ գատար տիրասու :

— Տէտիլին սահիհ տիր, էսամկէլ մայրապետ, սանըրն քի շէօյլէ արքայութիւնն թա՛ օրթաւընտայը :

Եագընլարընտա պուլունան վէլէտիղնանն պիրի եավաշճաճըդ , «Արքայութիւնա կիտէրոնիլ, օրատա պու գատար վարդապետ պուլամաղսընըդ, պիլմիշ օլուն . » տէտի :

Թահտա գուրուլարընը քիւլիյէն մահվ իտէր

Կիճէ՛ ՍԷՖՍ. ԼՍԲԱՍԸ

Սթըրըր Պահճէ գաբըսընտա քէօրիւնին գար. շըսընտա 77 Նօմէթօ Քիւչիւկեան պիրատէրէրին էճղոճը տիւքեանընտա վէ եինէ պիրատէրանը մումայիլէյհիւմիւն պէյ օլլու տօղրու եօլտարի 168 Նօմէթօլու էճղախանէսինտէ վէ պալի բաշա պաշընտա Սամիկ էֆէնտի Աստուրեան էճղախանէսինտէ , վէ Սարբար Եէնիմահալլէսինտէ Վիչէն էֆէնտի Ճէրմահեան էճղախանէսինտէ վէ սալիւքեաֆֆէի էճղախանէլէրտէ գուլթուսու 5 ղըշ :

## ՃԱՅԻՆՏ ԳՈՒՄԲԱՆԻԱՍԸ

ՄԻԿԱՐԱ ՔԵԱՂԱՏԸ ՏԵՊՊՕՍՈՒ

ԻՍԹԱՆԳՈՂ ԱԼԱՃԱ ՀԱՄԱՄ

Ապուտ էՖ. խանը գուրպիստէ Ն : 42

Պալատէքի սերէհվալը եէնի քիւշառ օլան Տէ. բօղիթօտա՝ էվրօսանըն վէ պախաւաա Ֆրանսանըն էն մէշուր ֆապրիգալարընտան պիրինճի Նէվի սիկա. ըա քեաղըր թէտարիք իթտիրիւալ , իմալ վէ ֆիլուլթ օլունմագտա տըր : Միւսլէրէմ էհալինին իսթիմալ իթտիկի տուխանըն Նէվի հէր գանդիսի օլուր իտ օլուն, ալա խալիս բերինճտէն մա՛մուլ օլան մէղքիւր քեաղըրն էլիկի անճաղ աղըզա ֆէվ քէլտտէ էզզէթ վէ թաթլըրդ կէթիլմէքտէն իպա. ըէթ տիր : Կէրէք իսթամպօլ վէ կէրէք թաշարալիւն վուգու պուլաճաղ սըբարըլար սուհուլէթլէ վէ աթիտէ միւնտէրիճ շարթլար իւզրէ իճրա օլունուր : Պիրինճի. — Կէօթէրիլէն Նիւմունէլէր մունճիպինճէ կէրէք քեաղըրալարն ճինսի վէ կէրէք ատէտէրի տօղ. ըու օլաճաղ տըր :

Իքինճի — Սըբարըլարը կիւնիտէ թէսլիմիտուպ էօյլէ : «Պու կիւն օլմատը, եարըն օլաճաղ, կիպի սէօղ. լէր իւլէ միւշտէրիլէրի պլտաթմաեաճաղ տըր : Իւչիւնճի. — Կէրէք քեաղըրալարն արալարընտա վէ կէրէք ըսիմէրտէ ալա թագիւտ պուլունմաեաճաղ : Թէշրիֆէ ըաղէթ պուլաւաճաղ էֆէնտիլէր իշպու իլանըմըզտա միւնտէրիճ շարթլարը թէմամէն իճրա իթմէքտէ օլտուղումուղու թատիղ իտէճէրէր :

ՇԱՅԻՆՏ ԳՈՒՄԲԱՆ.









Սոյն ֆուտսալայի Գրականի Բառարանի հակառակ իր փոքր ծառային ու համապատասխան կը պարունակէ գրեթէ մեծ բառարանային չափ բառ և ոճ: Անձուկ միջոցի մէջ հեղինակն յաջողած է յաճախ գետնի վրայ աշխարհագրական բառերուն և ոճերուն քով՝ դրարար համանիշներն ալ, որք անհրաժեշտ են մասնագիտական գործոց թարգմանիչներուն: Ի հարկին բառերուն տաճկերէններն ալ գրուած են, որպէս և անկանոն արտասանութիւնք: Սոյն նիւթական ու բա-

րդական առաւելութիւններէ զատ՝ կարեւոր թերի մ'ալ կը լնու Գրականի Բառարանը, որուն կցուած է պատմական, աշխարհագրական ու դիցաբանական անուանց բառարան մը: Բառարանութիւն վերնագրեալ հատուած մ'ալ ուր համառօտաբար կ'աւանդուին բառակազմութեան կանոնք՝ եզական գործ մը կը կապուցանէ Գրականի ֆուտսալայի Բառարանը: Կազմեալ Անգլիական հաստատուն կազմով:

## ԲԱՌԳՐՔՈՒԿ

ՀԱՅԵՐԷՆԷ Ի ՏԱՃԿԵՐԷՆ ԵՒ Ի ԳԱՂԻԵՐԷՆ

ՊԱՆՏԱՏԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

7000 է աւելի գործածական բառեր պարունակող այս փոքրիկ եւ սիրուն բառգիրքը որ արժանացաւ եօթներորդ տպագրութեան, արժանացած է եւ կը ծախուի 4 դրուի:

Կազմը Անգլիական լարով է, եւ ամէն գրպաններու յարմար:

ՏԵՐ - ԽՄԲԱԳԻՐ  
ՏԻՐԱՆ Գ. ՓԱՓԱՋԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԸՆԿ.  
معرف نظارت جليله سلك رخصتنامه سله طبع اول شدر

— 16 —

Քօսէ. — Ո՛հ, դոցեցէ՛ք այդ խօսքը:

Վիք. — Ի՞նչ հոգս, հովը որ կողմէն ուղէ խելքին փչէ, ինչո՞ւ ուրեմն իւր ձմեռուան մեծ վերաբերութիւն փաթտուած, հագուստէն և ձեւերէն առանց ճանչցուելու իրիկունները դուրս կելլէ, արդեօք քանի՞ պատուհաններէ դռներէ անցնելու պէս դիւրութեամբ կը մտնէ, ինծի համար հոգ չէ բարեկամը, թող ամառնայեալը մտածեն:

Քօսէ. (Գլխի շարժումով) — Պարոններ, թագաւոր մը, հին իշխանները աղէկ գիտեն այս բանը, թագաւոր մը որուն տունը որ ըլլայ՝ ուզած առեւեր կրնայ մտնել, վա՛յ անոր, որ քոյրեր, կին և աղջիկներ ունի. զուարճութեան մէջ գլուխը տարցած զօրաւոր իշխան մը ամեն տեսակ փորձանք կրնայ հաղթել, ասանկ վիճակ մը վախճուելու վիճակ մ'է:

Վիք. (Այլ, ցած) — Կը տեսնէ՞ք, ինչպէս կը վախնայ ֆրանսուայէ:

Բարթ. — Բայց իւր գեղեցիկ օրկինքը աւելի քիչ վախնալու է:

Կօրթ. — Ահա այդ պատճառաւ է որ ամառնին ալ կը վախնայ:

Բարթ. — Քօսէ, կը սխալիք, արքայն միշտ ուրախ զուարթ և գոհ ընել ջանալու է:

— 13 —

Բիէն. — Լուսթիւն. (Զայն շարժումով) չի մօտենա՞ն, Պարոն Մառօ:

Մարօ. — Ի՞նչ կը հրամայէք տէր իմ:

Բիէն. — Յիմար մ'ես դու:

Մարօ. — Ձէի կարծեր որ բանի մը մէջ ես ալ մեծ եղած ըլլամ:

Բիէն. — Բէշիլըայի պաշարմանը վրայօք դրածիդ մէջ սա տղերք կարգացի Թախուլէին վրայ. գլխուն վրայ եղջերունները կարուտած խէնթ մը և երեսուն տարեկան ունեցած խելքը ծնած օրուն խելքին հաւասար այժ, մեծ յիմար մ'ես դու:

Մարօ. — Եթէ ըսածներէդ բան մը հասկցայ՝ սատանի ձագ ըլլամ:

Բիէն. — Ծառ լաւ կըլլար. (Բայց) Պարոն Կօրթ, Պարոն Բարթայեսն, գտէ՛ք տեսնեմ, չի լսուած բան մը պատահեցաւ Թախուլէի գլխուն:

Բարթ. — Արդեօք կրնա՞ք շտկուեցաւ:

Կօրթ. — Արդեօք պարագլխաւ ըրին զինքը:

Մարօ. — Արդեօք զինքը խորովելով սեղանը բերին:

Բիէն. — Ո՛հ, աւելի տարօրինակ բան մը. չի տեսնէ՛ք ունեցածը, անհաւատալի բան մը: